Պատասխաններ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2022-2023 ուս. տարի
10 – րդ դասարան

1. ա-ճիշտ; բ-սխալ; գ-սխալ; դ-սխալ (յուրաքանչյուրը՝ **0.25միավոր**)
2. ա-ճիշտ; բ-ճիշտ; գ-ճիշտ; դ-սխալ (յուրաքանչյուրը՝ **0.25միավոր**)
3. Սինգապուր
4. բ
5. ա - բարեխառն
բ. - բարեխառն

6. ա. Երևանում արևի ճառագայթների անկման անկյունը մարտի 21-ին կլինի 90^0-40^0=**50^0**: Հետևաբար խնդիրը բերվում է 50^0=90^0-(β±23.5^0) տեսքին, որտեղ β-ն որոնվող Ա կետի աշխարհագրական լայնությունն է: Լուծելով հավասարումը (β+23.5^0) և (β-23.5^0) դեպքերի համար՝ կստացվի, որ Ա կետը կարող էր գտնվել կամ **հս.լ.16.5^0** կամ **հվ.լ.63.5^0** զուգահեռականների վրա: Յուրաքանչյուր լիարժեք պատասխանը՝ **0.5միավոր**: Աշակերտը կարող է նաև տրամաբանել, որ դեկտեմբերի 22-ի և մարտի 21-ի դիրքերի միջև աստիճանային տարբերությունը 23.5^0 է, հետևաբար է որոնվող կետերից մեկը Երևանից 23.5^0 հարավ է լինելու: Այս դեպքում ևս լուծումը ճիշտ և եթե աշակերտը ստանում է հս.լ.16.5^0, շնորհել 0.5միավոր: Եթե աշակերտը ներկայացնում է լուծումներից մեկը և ճիշտ է ստանում թվերը, սակայն չի նշում հյուսիսային, թե հարավային լայնության են դրանք, նշանակել 0.25միավոր: Իսկ եթե լուծումը ներկայացված չէ, սակայն գրված է պատասխան՝ նշանակել 0:

բ. Քանի որ հունիսի 22-ի կեսօրին ստվերները անհետանում են հյուսիսային արևադարձի վրա, հետևաբար ճանապարհորդը մեկնարկել է **հս.լ.23.5^0; արլ.ե.44^0** կոորդինատներով կետից: Մեկնարկի կոորդինատները ճիշտ որոշելու և լիարժեք գրելու դեպքում՝ **0.5միավոր**: Կոորդինատների մեջ յուրաքանչյուր թերության դեպքում միավորը նվազեցնել 0.25միավորի չափով: Քանի որ հյուսիսային բևեռային շրջագիծը հս.լ.66.5^0 զուգահեռականն է,

66.5^0-23.5^0=**43^0** (եթե լուծման մեջ աշակերտը այս քայլից առաջ չի գնացել տալ 0.25միավոր)

43^0 x 111կմ=**4773կմ** (**0.5միավոր**)

7. ա. Սպանդարյան, Անգեղակոթ, Տոլորս, Շամբ (Տաթև)

բ. Հետևյալ 5 պլատֆորմներից ցանկացած չորսը. Արևելաեվրոպական (Ռուսական), Սիբիրյան, Չինական, Հնդկական, Արաբական

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ **0.25միավոր**: Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ նշված պատասխանի դեպքում միավորը նվազեցնել 0.25-ով:

8. ա. Կիտո, Հռոմ, Փարիզ, Նորիլսկ

բ. Ամազոն, Լիմպոպո, Դանուբ, Յուկոն

Երկու դեպքում էլ յուրաքանչյուր դիրքում ճիշտ պատասխանը նշելու պարագայում աշակերտին շնորհել **0.25միավոր:**

9. ա. Կարելի է բացատրել հետևյալ առանցքային պատճառներով (յուրաքանչյուրի համար **0.5միավոր**). **1)** զարգացող երկրներում, ցածր ուրբանիզացման մակարդակի պայմաններում, դիտվում են ուրբանիզացիայի (քաղաքայնացման) ավելի բարձր տեմպեր: Պատճառներից են գյուղական աղքատությունը, արդյունաբերության զարգացումը, քաղաքային միջավայրի ընձեռած ավելի լայն հնարավորությունները, ռեգիոնալ կառավարման թերություններով պայմանավորված՝ բնակչության համակենտրոնացումը որոշ տարածքներում: **2)** զարգացող երկրներում բնակչության բարձր բնական աճը, այդ թվում քաղաքային միջավայրում: Հատկապես հաշվի է առնվում, որ զարգացող երկրներում հիմնականում երիտասարդներն են գաղթում քաղաքներ և հետևաբար նաև նպաստում են քաղաքային բնակչության երիտասարդացմանը և ավելի բարձր բնական աճին: Եթե պատասխանում չեն նշվում

ուրբանիզացման միտումները կամ բնակչության բարձր բնական աճը, բայց ինչ-որ երկրորդական նշանակության ճիշտ հիմնավորումներ են ներկայացվում՝ յուրաքանչյուրի համար շնորհել 0.25 միավոր:

բ. Հիմնական պատճառներից են (յուրաքանչյուրը՝ **0.5միավոր**). 1) ԱՄՆ տարածքի յուրացման ժամանակագրությունը, որի համաձայն արևելյան նահանգները ավելի վաղ են բնակեցվել ներգաղթյալների կողմից; 2) Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի համեմատ՝ ավելի երկարատև ինտենսիվ առևտրատնտեսական հարաբերությունները Եվրոպական տարածաշրջանների հետ; 3) տարածքի մասնատվածությունը և ռելիեֆի ընդհանուր բնույթը, որը արևելյան նահանգների բնակեցման համար ավելի լավ նախադրյալներ է ստեղծում: Եթե պատասխանում չեն նշվում բերված երեք հիմնական պատճառներից որևէ երկուսը, բայց ինչ-որ երկրորդական նշանակության երկու ճիշտ հիմնավորումներ են ներկայացվում՝ յուրաքանչյուրի համար շնորհել 0.25միավոր:

10. ա. 1979-1983թթ. և 1986-1988թթ. (**յուր. 0.25միավոր**)

բ. ԽՍՀՄ ձեռնարկած ռազմական գործողությունները մոջահեդների դեմ: Ճիշտ համարել նաև ԽՍՀՄ հատուկ օպերացիան կամ նմանատիպ ձևակերպումները **(0.5միավոր)**: Սակայն, եթե աշակերտը նշում է պարզապես քաղաքական անկայունություն՝ առանց հիշատակելու ռազմական գործողությունների կամ պատերազմի մասին՝ շնորհել 0.25միավոր:

գ. Գլխավոր պատճառը ռազմական օպերացիայի ավարտից հետո փախստականների մեծ ներգաղթն էր **(0.5միավոր)**: Եթե աշակերտը փոխարենը նշում է ռազմական գործողություններին հաջորդած ավելի բարձր բնական աճի գործոնը՝ շնորհել միայն 0.25միավոր

դ. Որպես հիմնական պատճառ աշակերտը կարող է նշել ինչպես ներքին քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական հարաբերական կայունությունը: Երկու դեպքում էլ՝ **0.5միավոր**

11. ա. Կրակային երկրագործությունը գյուղատնտեսության մեջ կիրառվող մեթոդ է, որի դեպքում հողը բնական բուսականությունից ազատելու և միաժամանակ պարարտացնելու նպատակով այդ բուսականությունը այրում են և ազատված հողը՝ մշակում **(0.25միավոր)**: Ավելի ռիսկային է **Սահելի գոտում (0.25միավոր)**: Անապատացումը չորային և կիսաչորային տարածքներում հողի բերրիության անկման և բուսականության վեգետացիայի հնարավորությունների նվազման գործընթացն է: Սահելի գոտում կրակային երկրագործությունը անապատացման ավելի մեծ ռիսկեր է պարունակում, քանի որ Սահելի գոտին բնական վիճակում սավաննա է և Ամազոնիայի համեմատ զգալիորեն ավելի չորային տարածք է, ինչի արդյունքում վնասված բուսականության բնական շերտը դժվարությամբ է վերականգնվում և տարածքը հիմնականում վերածվում է անապատի **(0.5միավոր)**:

բ. Սուբուրբանիզացիան քաղաքային բնակչության տեղաշարժն է կենտրոնական հատվածից դեպի ծայրամասային, արվարձանային գոտի **(0.25միավոր)**: Այն ավելի բնորոշ է զարգացած երկրներին **(0.25միավոր)**: Հիմնական պատճառները բնակչության բարեկեցության բարձր մակարդակը և քաղաքների կենտրոնական հատվածների գերծանրաբեռնված վիճակն ու շրջակա միջավայրի ցածր որակն են, որի պայմաններում քաղաքի շատ բնակիչներ նախընտրում են բնակվել արվարձանային՝ ավելի մաքուր, հանգիստ և ապահով պայմաններում **(0.5միավոր)**: Եթե աշակերտը իր մեկնաբանություններում և սահմանման մեջ երևույթը ավելի շատ բնութագրում է կեղծ ուրբանիզացիայի նմանությամբ, նման մեկնաբանությունների համար միավոր չշնորհել:

12. Ա- Փուլ3; Բ- Փուլ4; Գ- Փուլ1; Դ- Փուլ2